



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 107

Ձեռնարկողը՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ
Ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝

**Քաջարան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի
համակցված տարածական պլանավորման փաստաթղթի
(Սյունիք-5) շրջակա միջավայրի վրա ազդեցության
նազմավարական գնահատման հաշվեկշիռային
Մյունիքի մարզ**

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈՒՄԻ
տնօրենի ժ/պ՝**



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 107

<< 19 >> 12 2018թ.

Սյունիքի մարզի Քաջարան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-5) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝

Հիմադրույթային փաստաթուղթ.

- շրջակա միջավայրի վրա ազդեցության

ռազմավարական գնահատման

(ՌԷԳ) հաշվետվություն, գծագրական նյութեր

Սյունիքի մարզի Քաջարան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (Սյունիք-5՝ ք. Քաջարան, Անդոկավան, Բաբիկավան, Ձագիկավան, Նոր Աստղաբերդ, Աջաբաջ, Գետիշեն, Ոչեթի, Գեղի, Գեղավանք, Կարդ, Կիցք, Վերին Գեղավանք, Քարուտ, Լեռնաձոր, Կավճուտ, Կաթնառատ, Ներքին Գիրաթաղ, Վերին Գիրաթաղ, Փոխրուտ, գ. Քաջարանց բնակավայրեր) նախագիծը մշակվել է ՀՀ Կառավարության որոշմամբ, կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի պատվերով (N ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/1-4):

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում արտացոլվել են միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, մասնավորապես.

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի համակողմանի վերլուծությունը,
- մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային անհրաժեշտ խնդիրների բացահայտումը,
- համայնքի հեռանկարային զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,



• քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը:

Հիմնադրույթը ներկայացնում է փաստաթղթերի մշակման նպատակային ծրագիր, որը կհամապատասխանի մարզի հավասարակշռված և ներդաշնակ զարգացման նպատակներին ու խնդիրներին՝ մասնավորապես. տարածական զարգացման հիմնական գործիքակազմի միջոցով կանխորոշելով և կանոնակարգելով տարածքների և տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները՝ ռեկրեացիոն ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, շրջակա միջավայրի պահպանման ու բարելավման, ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների կատարելագործման, պատմամշակութային ժառանգության պահպանման, տարածքի ինժեներական նախապատրաստման, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանության, ինչպես նաև բնակչության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների համալիրով:

Նախագծում համակողմանի վերլուծվել և ընդհանրացվել են համայնքների ընդհանուր բնութագրերը.

- տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգը՝ երկարաժամկետ հեռանկարում,
- բնակավայրերի գործող և կանխատեսվող տնտեսական (գյուղատնտեսական, զբոսաշրջային, արդյունաբերական, մշակութային, գիսատար) մասնագիտացումները,
- տարածաշրջանային նշանակության ենթակառուցվածքների և օբյեկտների տեղաբաշխման ուրվագիծը,
- սոցիալական օբյեկտների առկա և կանխատեսելի տեղաբաշխման ուրվագծերը,
- ինժեներական նախապատրաստման, տարածքների և բնակչության պաշտպանության բարձրացմանն ուղղված ծրագրերը,
- տարածաշրջանի զարգացման ներդրումային ծրագրերը:

«Սյունիք-5» տարածական պլանավորման նախագիծի ընդգրկված տարածքի բնակչության թիվը կազմում է 8316 մարդ, որից Քաջարան քաղաքինը՝ 6940 մարդ: Միկրոռեգիոնը ներառում է Քաջարան համայնքը՝ քաղաքը և 20 բնակավայր: Միկրոռեգիոնի տարածքը զբաղեցնում է մարզի գրեթե միջնամասով անցնող արևելք-արևմուտք առանցքը՝ շարունակություն կազմելով Կապան գծային քաղաքին: Տարածքը արևելքից սահմանակից է Կապան համայնքին, հյուսիսից՝ Սիսիանին, հարավից՝ Մեղրին, արևմուտքից՝ Նախիջևանին: Քաջարան քաղաքային և նշված գյուղական համայնքները ներառում են 64626.9հա հողեր, որից գյուղատնտեսական՝ 29582.2հա, բնակավայրերի՝ 369.07հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման՝ 111.56հա, էներգետիկայի և տրանսպորտի՝ 21.18հա, հատուկ պահպանման տարածքներ՝ 17383.13հա, անտառային՝ 2930.38հա, ջրային՝ 252.38հա:

Աշխարհագրորեն տարածքը գտնվում է Հանրապետության հարավ-արևելքում, Ջանգեզուրի լեռնաշղթայի արևելյան ճյուղավորումների և մասամբ՝ Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային լեռնաբազուկների վրա, ընդգրկվելով Ողջի գետի վերին ավազանը: Քաջարան



քաղաքը կառուցված է Ողջի գետի երկու բարձրադիր ափերին, բավականին նեղ աստիճանաձև սարավանդի վրա: Բարձր վտանգավորության գոտի է, առկա է խոշոր սողանքային տարածք՝ մի քանի ակտիվ օջախներով: Քաղաքի կարգավիճակ է ստացել 1958թ. օգոստոսի 21-ին: Գլխավոր հատակագիծը մշակվել է 1965թ-ին:

Սյունիքի մարզում, ըստ բարձունքային գոտիականության, հերթափոխվում են Հանրապետության տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները՝ չոր մերձարևադարձային, չափավոր տաք, բարեխառն, ցուրտ լեռնային և ձյունամերձ: Սյունիքում է գտնվում Հանրապետության ամենատաք վայրը՝ Մեղրու ցածրադիր գոտին: Քաջարանի կլիման բարեխառն լեռնային է. Ամառը լինում է կարճատև ու զով, ծմեռը՝ ցուրտ և ձյունառատ: Ձյունը տեղում է հիմնականում ձմռան երկրորդ կեսին, իսկ կայուն ձյունածածկը պահպանվում է մինչև ապրիլ:

Մարզը հանրապետության ամենահարուստ տարածքներից է՝ ըստ պատմամշակութային ժառանգության:

Տարածաշրջանի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական և կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ապահովելու նպատակով տարածաշրջանում կազմակերպվել են բնության հատուկ պահպանվող տարածքներ: Տարածաշրջանում գործող բնության հատուկ պահպանվող տարածք /ԲՀՊՏ/ է հանդիսանում <<Զանգեզուր>> կենսոլորտային համալիրը, որում ներառված են տարածաշրջանի բոլոր արգելոցները և արգելավայրերը:

Քաջարանց գետի ավազանը գտնվում է հանրապետության հարավային մասում: Գետը սկիզբ է առնում Զանգեզուրի լեռնանցքից՝ 3825.0մ բարձրությունից: Գետի հոսքը ձևավորվում է ստորգետնյա աղբյուրների և մակերեսային ջրերով:

Սյունիքի մարզի ընդհանուր մակերեսը կազմում է 450600.0հա, որից սողանքային տարածքների մակերեսը 6446.0հա, կամ ընդհանուրի 1,43%-ը: Մարզը հանդիսանում է Հայաստանի ոչ խիտ բնակեցված մարզերից մեկը (բնակչության խտությունը՝ 31 մարդ/քառ.կմ):

Սյունիքի մարզով են անցնում Մ-2 Երևան-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետություն միջպետական ճանապարհը: Մ-2 ավտոճանապոհ են իրականացվում Իրանի Իսլամական Հանրապետությունից ներմուծվող և արտահանվող բեռնափոխադրումները:

«Սյունիք-5» միկրոռեզիդնում տեղակայված է 23 գերեզմանոցներ ընդհանուր 42.86հա տարածքում (այդ թվում Քաջարան քաղաքային համայնքում՝ 3 գերեզմանատուն ընդհանուր 9.26հա մակերեսով): Գերեզմանոցները գործող են, չունեն սանիտարա-պաշտպանիչ գոտիներ, ճանապարհները քանդված են, տարածքները կանաչապատված չեն:

Քաջարան համայնքի աղբը տեղակայվում էր հանքավայրի դատարկ ապարների թափուկադաշտում: Տարածքը, որպես աղբավայր, ի սկզբանե չի նախագծվել և կառուցվել, չի համապատասխանում տեխնիկական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշներին: Ներկայումս Քաջարան քաղաքի աղբահանությունը իրականացվում է քաղաքապետարանի կողմից, պայմանագրային կարգով, սահմանված ժամանակացույցով դեպի Կապանի աղբավայր:

Սյունիքի մարզի տնտեսությունը ունի հստակ արտահայտված միաճյուղ զարգացում (տնտեսության 61.9%-ը՝ արդյունաբերություն, իսկ արդյունաբերության 84.7%՝ հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը): Տնտեսության



նման կառուցվածքը իր մեջ պարունակում է ռիսկեր, և անհրաժեշտություն է առաջանում խթանել տնտեսության այնպիսի ճյուղերի զարգացումը, որոնք ուղղակիորեն կապված չեն լեռնահանքային արդյունաբերության հետ: Քաջարանում է գտնվում Հայաստանի խոշորագույն հանքարդյունահանող ընկերությունը՝ Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, պղնձի և մոլիբդենի խտանյութն վերջնական արտադրության արդյունքով: Մեծ տեսակարար կշիռ ունի նաև մշակող արդյունաբերությունը՝ որում առանձնանում են սննդամթերքի և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

Ըստ հիմնադրությային փաստաթղթի՝ համայնքի հիմնախնդիրներից կարևորվում է բնակչությանը նորմատիվային պահանջներով ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներով և բնակելի բազմաբնակարան շենքերի սեյսմակայուն շինարարության պահանջների ապահովումը, բնակելի թաղամասերի կանաչապատումը և ոռոգման համակարգի կանոնավոր գործարկումը, աշխատունակ բնակչության զբաղվածության խնդրի լուծումը:

Սյունիքի մարզում առկա է զգալի զբոսաշրջային ներուժ, որը ներկայացված է Սյունիքի հարուստ, գեղատեսիլ և առողջարար բնությամբ, անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, բնության հուշարձաններով, բուժիչ ջրաղբյուրներով և ենթակառուցվածքներով: Զբոսաշրջության զարգացման հեռանկարի զարգացմանը զուգընթաց առաջանում է բնապահպանական խնդիրների կարևորումը՝ մասնավորապես առավել նվազ վնասակար ազդեցության ուղիների նախանշումը:

Բնապահպանական առումով կարևորագույն խնդիրներից է գոյություն ունեցող անտառային զանգվածների պահպանումը, վերականգնումը, նորացումը, նոր տարածքների անտառապատումը: Արժեքավոր բնական լանդշաֆտներն ուրբանիզացված միջավայրի ազդեցությունից պահպանելու առավել ռացիոնալ հատակագծային լուծումը դա լանդշաֆտների շուրջ պաշտպանական բուֆերային գոտու ստեղծումն է, որը որոշ չափով կպահպանի տարածքն վնասակար ազդեցություններից:

Փողոցային ցանցը և կառուցապատումը ենթարկված են բնական լանդշաֆտի թելադրած պայմաններին, ինչի հետ կապված էլ դրանցից որոշներն ունեն կոմպակտ, մյուսները գծային կամ տարանջատ հատակագծային կառուցվածք:

Խմելու ջրի մատակարարման, ինչպես նաև կոյուղու ծառայությունները իրականացնում է «Քաջարանի համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ի կողմից: Ջրամատակարարման և կոյուղու համակարգերը համայնքային սեփականություն են: Գազի բաշխման ներհամայնքային ցանցը ևս համայնքային սեփականություն է, որը տրված է «Գազպրոմ-արմենիա» կազմակերպությանը անհատույց շահագործման: Աղբահանությունը պայմանագրային հիմունքներով իրականացնում է «Քաջարանի կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ն:

Քաջարան քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է Կապուտջուղ լեռան ստորոտից սկիզբ առնող Ողջի գետի վտակներից: Հեռանկարում՝ ելնելով ռելիեֆային պայմաններից, ջրմուղի ցանցում անհրաժեշտ թույլատրելի ճնշում և պահանջվող ջրաքանակ ապահովելու համար բնակավայրերի խմելու ջրամատակարարումը նպատակահարմար է իրականացնել գոտիներով, անհրաժեշտության դեպքում առանձին թաղամասերի համար կիրառելով ճնշման կարգավորիչներ կամ նախատեսելով նոր ՕԿԶ-ներ: Խմելու ջրի վարակազերծման նպատակով ջրամատակարարման գլխամասային կառույցներում քլորակայանների նախատեսմամբ:



Մարզի բոլոր քաղաքները՝ Կապան, Քաջարան, Մեղրի, Գորիս, Սիսիան, ունեն կոյուղու համակարգ, սակայն մաքրում իրականացվում է միայն Քաջարան քաղաքում, որը սպասարկում է մարզի բնակչության 5%-ին: Գյուղական բնակավայրերը հիմնականում չունեն ջրահեռացման համակարգ և հոսքաջրերը առանց մաքրման, կոյուղատար խողովակներով հեռացվում են մոտակա բաց ջրավազաններ: Բնակավայրերի տարածքներից հեռացման ենթակա հոսքաջրերը մասամբ ներծծվում են հողի մեջ, մնացած մասն էլ անկանոն առղյուների միջոցով թափվում են գետերը:

Սույն նախագծի շրջանակներում ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից գերծ պահելու նպատակով, հեռանկարում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր համայնքները: Ժամանակակից տեխնոլոգիաներով նոր, գործարանային արտադրության կոյուղու կենսաբանական մաքրման կայանի միջոցով կոյուղու հոսքաջրերի հեռացումը նախատեսվում է իրականացնել միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների միջոցով: Քաջարան քաղաքում նախատեսվող մաքրման կայանը առաջարկվում է տեղակայել նախկին կայանի տարածքում: Լեռնաձոր, Նոր Աստղաբերդ, Գեղի և Քաջարանց գյուղական բնակավայրերում առաջարկվում է տեղադրել լոկալ, ժամանակակից տեխնոլոգիաներով գործարանային արտադրության կոյուղու կենսաբանական մաքրման սարքավորումներ:

Առաջարկվել է ոռոգման կաթիլային համակարգի ներդրում, որի միջոցով հնարավոր է հողի խոնավությունը պահել օպտիմալ սահմաններում, ինչը արմատների աճի ողջ շրջանում դրանց համար կապահովի ինտենսիվ շնչելու հնարավորություն՝ անգամ անմիջապես ոռոգումից հետո:

Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը ներկա դրությամբ կազմում է 224.91հա, իսկ անտառային տարածքների մակերեսը՝ 254.30հա:

Քաջարան քաղաքային և նշված գյուղական համայնքներում ներկայիս ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) ընդհանուր մակերեսը կազմում է 1.72հա: Ներկա դրությամբ Քաջարան քաղաքում գործում է ընդհանուր օգտագործման մեկ ընդարձակ զբոսայգի (քաղաքային)՝ 1.05հա տարածքով: Զբոսայգու վերջնամասի որոշ հատված զբաղեցված է ավտոտնակներով, տարածքը անբարեկարգ վիճակում է և իր նշանակությամբ կիրառելի չէ: Բնակչության քանակի հաշվարկով՝ համաձայն քաղաքաշինական նորմերի պահանջների, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսը պետք է կազմի մոտ 7.0հա (10մ²/մարդ), ինչը մոտ 7 անգամ ավելի է ներկայում գոյություն ունեցողից:

Մասնակի կանաչապատ տարածքներ առկա են բազմաբնակարան շենքերի բակային հատվածներում (սահմանափակ օգտագործման կանաչ) և փողոցներին կից՝ ծառատնկումները (հատուկ նշանակության կանաչ): Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը ներկա դրությամբ կազմում է՝ ք. Քաջարան- 30.86հա, 20 գյուղ - 303.02հա:

Տարածաշրջանի հեռանկարային զարգացման համար առաջարկվել է գոյություն ունեցող զբոսայգու համար մշակել բարեկարգման նախագիծ՝ քաղաքաշինական նորմերի պահանջների ապահովմամբ: Նախատեսել արահետային համակարգ, բացօթյա ժամանցային հաստատություններ, խաղահրապարակներ, միջոցառումների կազմակերպման հարթակներ, ինչը կիրառելի կդարձնի ընդհանուր օգտագործման կանաչ զբոսայգին:



Սյունիքի մարզը, բացի լեռնահովիտային բրենդից, ունի գյուղատնտեսության և տուրիզմի զարգացման մեծ հնարավորություն: Այստեղ կան մեծ հնարավորություններ զարգացնելու գյուղատնտեսությունը, գյուղատնտեսության հետ կապված ճյուղերը: Բավականին մեծ են նաև տուրիզմի զարգացման հնարավորությունները: Սյունիքի հարավը կարիք ունի հյուրանոցային համալիրների, կարևոր է նաև Կապանի օդանավակայանի գործարկումը:

«Սյունիք-5» զարգացման ծրագրով նախատեսվող աշխատանքների իրականացումը կնպաստի շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը: Բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները ներառում են.

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում,
- Ողջի գետի վերին և միջին հոսանքներում Ողջի-1 և Ողջի-2 ջրամբարների կառուցում՝ 13.0մլն.մ³ և 10.86մլն.մ³ ծավալներով,
- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում,
- շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու բարեկարգում,
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում,
- Ողջի գետ թափվող տնտեսա-կենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում,
- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերականգնում,
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում,
- համայնքներում հանգստյան գոտիների ստեղծում,
- համայնքների տարածքում աղբահանման կազմակերպում, ժամանակակից պայմաններին համապատասխան աղբավայրերի կառուցում, աղբամշակման գործարանի կառուցում,
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում),
- հեղեղապաշտպան անտառատնկումների իրականացում,
- ջերմամատակարարման իրականացում գազով, ինչի արդյունքում մթնոլորտ արտանետումները կրճատվում են 18.83տ/տարի քանակով,
- Քաջարան քաղաքից Մ-2 միջպետական ճանապարհի տեղափոխում, ինչի արդյունքում մթնոլորտ արտանետումների քանակը կկրճատվի 498.45տ/տարի:

Հեռանկարում բնակչության թվի ավելացման, IV-V դասի արդյունաբերական ձեռնարկությունների շահագործմամբ, անասնապահության հողագործության զարգացման հետ զուգահեռ նկատվում է օդի, հողային և ջրային պաշարների աղտոտվածության աննշան ավելացում:

Մարզում առկա է էլեկտրաէներգիայի բաշխման զարգացած ցանց, որը միացված է նաև ԻԻՀ-ը և Արցախին: Այժմ մեկնարկել է «Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման երրորդ գծի» շինարարությունը:

Քաջարան համայնքում ներկայումս շահագործվում է 7 ՀԷԿ, ևս չորսը՝ կառուցման փուլում են:



գործընթացում: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել է համալիրի առանձին տարրերի՝ օդային, հողային, ջրային ավազանի սանիտարահիգիենիկ վիճակը, նրա բարելավման ինժեներական տեխնոլոգիական և ագրոմելիորատիվ միջոցառումները:

Փորձաքննական պահանջներ

1. Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
2. Հիմնադրույթային փաստաթղթի գործունեության ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայնախագիծ>> ԲԲԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի Քաջարան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի (Սյունիք-5)՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Ա. Դոնոյան

Գլխ. մասնագետ

Կ. Մովսիսյան

